



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 սեպտեմբերի 2022 թվականի N 1377 - Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, սույն որոշման N 1 հավելվածում ներառված մարմիններին ամրացված տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք 1) հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե)՝ հետագայում օտարելու նպատակով:

2. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել սույն որոշման N 2 հավելվածում ներառված պետական մարմինների ենթակայության

փակ բաժնետիրական ընկերությունների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք 2) և ամրացնել կոմիտեին՝ հետագայում օտարելու նպատակով:

3. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել սույն որոշման N 3 հավելվածում ներառված պետական մարմինների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք 3) և ամրացնել կոմիտեին՝ հետագայում օտարելու նպատակով:

4. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել սույն որոշման N 4 հավելվածում ներառված հիմնադրամի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցը (այսուհետ՝ գույք 4) և ամրացնել կոմիտեին՝ հետագայում օտարելու նպատակով:

5. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում սույն որոշման N 1 հավելվածում ներառված պետական կառավարման մարմինների ղեկավարների հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ապահովել գույք 1-ի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրանց պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով վերջիններիս միջոցների հաշվին.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում NN 2, 3 և 4 հավելվածներում ներառված փակ բաժնետիրական ընկերությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնադրամի տնօրենների հետ համատեղ ապահովել գույք 2-ի, գույք 3-ի և գույք 4-ի նկատմամբ Հայաստանի Հանրապետության անունից նվիրատվության պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրա հետ կապված, ինչպես նաև գույքի պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով վերջիններիս միջոցների հաշվին:

6. Սահմանել, որ սույն որոշման 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված աշխատանքների կատարման նպատակով NN 1, 2, 3 և 4 հավելվածներում

ներառված տրանսպորտային միջոցները ենթակա են տեղափոխման կոմիտեի պետական շարժական գույքի պահառության նպատակով հատկացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 հասցեում գտնվող պահառության վայր՝ հանձնող կողմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան